ՀՏԴ 615.47:796.015

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐՄՆԻ ԿԵՆՍԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Ա.Լ. Շալջյան

Մխիթար Հերացու անվան հայկական պետական բժշկական համալսարանի կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու

Մ.Ս. Գրիգորյան
Զ.Մ. Միրիջանյան
Ա.Ս. Օհանջանյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոսներ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գործառութային վիճակ, կենսաէլեկտրական դիմադրողականության վերլուծություն, ինտեգրալ, երկհաճախականության իմպեդանսոմետրիա, մարմնի ինտեգրալ ռեոգրաֆիա:

Բուժական մարմնամարզության մասնագետներին և մարզիչներին հուզող հրատապ հարցերից մեկը հանդիսանում մարզողական միջոցառումների արդյունավետության գնահատումն է:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտային պարապմունքները, ինչպես նաև ցանկացած այլ ֆիզիկական գործունեության տեսակ գիտակցված վարքային գործողություն են: Օրգանիզմի գործառութային և սպորտային վարպետության կատարելագործման հնարավորությունների ուսումնասիրման ժամանակ սպորտային գործունեությունը և առողջարարական մարմնամարզության պարապմունքներն անհրաժեշտ է դիտարկել ինչպես համալիր վարքային ռեակցիաների, այնպես էլ ի պատասխան կանոնավոր ֆիզիկական բեռնվածությանը, օրգանիզմի ադապտիվ ռեակցիաների տեսանկյունից:

Մարդու գործառութային վիճակի վերլուծությունը և գնահատումը որոշիչ դեր ունեն մարզողական գործընթացի պլանավորման, մասնավորեցման և բեռնվածության չափավորման մեջ, առանց որի հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքների:

Սպորտային բժշկության մեջ մարդու գործառութային ախտորոշումը, որի բաժիններն ունեն էական ուսումնասիրության կարիք: Սպորտում գործառութային ախտորոշման գլխավոր և ժամանակակից խնդիրներից է մարզելու ազդեցությունը

օրգանիզմի վեգետատիվ գործառույթների վրա՝ ներառելով բարձր ֆիզիկական բեռնվածություն: Ինչ վերաբերում է առողջարարական ֆիզկուլտուրային, ապա օրգանիզմի սիրտ անոթային և շնչառական համակարգերի գործառութային վիճակի օբյեկտիվ տվյալներ ստանալու անհրաժեշտ պայման է առողջարարական և բուժական մարմնամարզության միջոցների չափավորված և նպատակաուղղված կիրառումը:

Այս կապակցությամբ կարևորություն է ձեռք բերում մարզիկի գործառութային վիճակի գնահատման այնպիսի մեթոդը, որը թույլ կտար մի կողմից արագ վերահսկել մարզողական գործընթացի արդյունավետությունը, մյուս կողմից՝ կօգներ բուժառողջարարական մեթոդների ընտրության և դրանց արդյունավետության գնահատման հարցերում:

Դրա հետ մեկտեղ, կարևոր է օրգանիզմի գործառութային վիճակի գնահատման համար կիրառվող մեթոդների և միջոցների տեղեկատվության մակարդակը:

Վիճակի հետազոտության անառարկելի առավելությունը, զուգահեռ գրանցվող մի շարք ցուցանիշները կարող է իրագործվել տարբեր աստիճանով՝ պաըմանավորված դրանց ընտրության և կիրառման հնարավորություններով: Ընդհանուր առմամբ՝ ընտրված ցուցանիշների քանակը որոշվում է որոշակի վիճակում տվյալ գործառութային համակարգի ներկայանալի արտահայտվածության համար անհրաժեշտության և բավարար քանակության օրենքով: Այս դեպքում կարևոր է հետազոտության մեջ ընդգրկել գլխավոր փոփոխական, այսինքն՝ ըստ նշանակության ցուցանիշներ (ըստ մեծության, օրգանիզմի համար նշանակության), որոնք իրենց իմաստը փոխում են որոշակի համակազմի համար՝ հետազոտության որոշակի պայմաններում:

Սպորտային բժշկության պրակտիկայում օրգանիզմի տարբեր համակարգերի գործառութային վիճակի գնահատման ոչ ինվազիվ է համարվում ընտրության մեթոդը:

Մարզիկի գործառութային վիճակի հետազոտության մեթոդներին ներկայացվում են բազմաթիվ, երբեմն փոխադարձաբար բացառող պահանջներ: Դրանց խմբին են դասվում՝ զննվողի անվտանգությունը, մեթոդական և տեխնիկական պարզությունը, կենսաֆիզիկական հիմնավորումը, չափումների հաճախակի կրկնողությունների հնարավորությունը ցանկացած պայմաններում (այդ թվում՝ էքստրեմալ), արդյունքների բարձր վերարտադրումը:

Հետազոտության գործողությունները չպետք է ազդեն չափվող ցուցանիշի վրա:

Այդ մեթոդներից մեկը կենսաէլեկտրական դիմադրողականության վերլուծությունն է:

Այս վերլուծության էլեկտրական և կենսաբանական իմաստը մարդու օրգանիզմի հյուսվածքների կամ հեղուկների դիմադրողականության (իմպեդանսի) չափման մեջ փոփոխական հոսանքով տարբեր հաճախությամբ առաջ և հետո ազդելին է: Նախնական հոսանքի կիրառման հաճախությունը տատանվում է սկսած 1-5-ից մինչև 500 և բարձր կՀց է:

Հետազոտությունը անց է կացվել համակարգչայնացված ապարատածրագրավորված համալիրի «Диамант – РКСМ» վրա՝ կարդիո-ռեսպիրատոր համակարգի, մարմնի զանգվածի կազմության, մարդու օրգանիզմի հյուսվածքների հիդրատացիայի հետազոտությունների համար:

«Диамант – РКСМ» համալիրը կազմված է զուգահեռ միացված մի շարք սարքերից (ռեո-, կարդիո-, սպիրո-, վերլուծիչներ և կարդիոռեսպիռատոր մոնիտոր) ինչը թույլ է տալիս գործառնականորեն հստակ ժամանակի մեջ գնահատել օրգանիզմի հիմնական սոմատո-վեգետատիվ համակարգի գործառութային վիճակը հետևյալ հետազոտական մեթոդների օգնությամբ՝

- ինտեգրալ երկհաճախության իմպեդանսոմետրիա, որը կիրառվում է օրգանիզմում ջրի, ճարպի, ոչ ճարպային և բջջային զանգվածը հայտնաբերելու համար
- էլեկտրասրտագրություն 12 միանման արտածումներում
- մարմնի ինտեգրալ ռեոգրաֆիա, որը կիրառվում է սիրտ անոթային և շնչառական համակարգի գործառութային հետազոտման համար. Հիմնականում՝ հարվածային ինդեքսը, սրտային ինդեքսը, սրտի կծկումների հաճախությունը, պահեստային գործակիցը, արյան շրջանառության տիպերը (հիպեր-, հիպո-, և նորմոկինետիկ) որոշելու համար
- հոսք-ծավալ հանգույց
- սպիրոգրաֆիա
- թոքերի առավելագույն օդափոխություն

Արտասահմանյան տարբեր հետազոտողների տվյալները նույնպես վկայում են այդ մեթոդների օգտագործման հնարավորության մասին:

Նկարագրված մեթոդը հիմնված է յուրաքանչյուր էֆֆեկտորի արդյունավետության շարժնթացի անմիջական վերլուծության վրա՝ հաշվի առնելով դրանց պահեստային հնարավորությունների հավասարակշռությունը, որոնց տարբերությունները մարդկանց դեպքում գերծանրաբեռնվածության պայմաններում արտահայտվում են ինչպես արդյունավետության այնպես էլ հավասարակշռության տարաբնույթ ցուցանիշների ձևով:

Գլխավորն այն է, որ դիտարկվող մեթոդն ապահովում է համակարգի գործառութային աշխատունակության անմիջական չափումը, և ոչ թե ստացված ցուցանիշների միջինացված տվյալները: Միաժամանակ մեթոդն ապահովում է ընտրության հնարավորություն և տարբեր կառավարող ազդակների լավագույն ռեժիմի ընտրությունը օրգանիզմի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Комплексная оценка функционального состояния систем кровообращения и дыхания методом интегральной реографии тела. Метод. рекомен. МЗ РСФСР. Составители: Волков Ю.Н., Большов В.М., Сингаевский С.Б., Земцовский Э.В., Гуссейнов Б.А. М., 1989. 21С.

2. Селуянов В.Н., Мякинченко Е.Б., Тураев В.Т. Биологические закономерности в планировании физической подготовки спортсменов. //Теория и практика ФК – 1993, № 7, с. 29-33.

3. R. Gudivaka, D.A.Schoeller, R.F. Kushner, and M.J.G. Bolt. Single- and multifreguency models for bioelectrical impedance of body water compartments. American Physiological Society.: 1087-1096, 1999

РЕЗЮМЕ
ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ СПОРТИВНОЙ ТРЕНИРОВКИ МЕТОДОМ БИОИМПЕДАНСНОГО АНАЛИЗА

А.Л. Шалджян
доцент кафедры биохимии Армянского государственного медицинского университета имени Мхитара Гераци, кандидат биологических наук

М.С.Григорян, З.М.Мириджанян, А.С.Оганджанян
преподаватели кафедры кинезиологии
Армянского государственного института физической культуры

Одной из наиболее актуальных проблем интересующих сегодня тренеров и методистов по лечебной физкультуре является оперативная оценка эффективности проводимых тренировочных мероприятий.

Анализ и оценка функционального состояния человека играют решающую роль при планировании тренировочного процесса и его строгой индивидуализации, определении оптимума нагрузки, без чего невозможно достижение желаемых результатов.

В связи с этим особую важность приобретает проблема использования такого метода определения функционального состояния спортсмена, который помог бы с одной стороны чутко контролировать продуктивность тренировочного процесса, а с другой стороны помог бы в выборе лечебно-оздоровительных методов и в оценке их эффективности.

Одним из таких методов является биоэлетрический импедансный анализ (БИА).

Электрический и биологический смысл этого анализа заключается в измерении сопротивления (импеданса) собственных тканей или жидкостей организма до и после воздействия переменным током с различной частотой.

Исследование проводилось на компьютеризированном аппаратно-программном комплексе «Диамант-РКСМ», для исследования кардиореспираторной системы, состава массы тела и гидратации тканей организма человека. Главное заключается в том, что метод обеспечивает непосредственное измерение уровня функциональной работоспособности системы.

SUMMARY
ASSESSMENT OF EFFICIENCY OF SPORTS TRAINING BY THE METHOD OF THE BIOIMPEDANCE ANALYSIS

A.L.Shaljyan
Associate professor at the Chair of biochemistry Mkhitar Heraci Yerevan State Medical University, Candidate of Biological sciences

M.S.Grigoryan, Z.M.Mirijanyan, A.S.Ohanjanyan,
Lecturers of the Chair of Kinesiology
Armenian State Institute of Physical Culture

One of the most actual problems of trainers and methodologists on physiotherapy exercises interesting today is the operative assessment of efficiency of carried-out training actions.

The analysis and assessment of a functional condition of the person play a crucial role when planning training process and its strict individualization, definition of an optimum of loading without what achievement of desirable results is impossible.

In this regard special importance is gained by a problem of use of such method of definition of a functional condition of the athlete which would help to supervise sensitively on the one hand efficiency of training process, and on the other hand would help with a choice of medical and improving methods and in an assessment of their efficiency.

One of such methods is the bioelectrical impedance analysis (BIA).

The electric and biological sense of this analysis consists in measurement of resistance (impedance) of own tissues or organism liquids before and after influence by an alternating electrical current of various frequency.

Research was carried out on the computerized hardware-software Diamant-RCSM complex, for research of cardiorespiratory system, structure of weight of a body and hydration of fabrics of a human body. The main thing is that a method provides direct measurement of level of functional operability of system.

ՀՏԴ 376.3:159.922.7

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՎԱՂ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Լ. Հ. Սարատիկյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Լ.Ն. Բալաբեկյան

<<Պատմոս- Արարատ>> բարեգործական հիմնադրամի լոգոպեդ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. լսողության խանգարում, լսողության վաղ պրոթեզավորում, խխունջային ներպատվաստում, լսողական ընկալում, առարկայական գործունեության զարգացում, սուրդոմանկավարժական վաղ օգնություն:

Հայտնի է, որ լսողության խանգարումները դժվարեցնում են մարդու սոիալականացումը և խոչընդոտում ինքնուրույն կյանքի ու գործունեության կայացմանը: Դրանք բազմաթիվ սցիալ-հոգեբանական և մանկավարժական խնդիրներ են առաջացնում ոչ միայն երեխաների, այլև՝ նրանց ծնողների համար: Լսողության խանգարումները բացասաբար են անդրադառնում երեխայի խոսքի և հաղորդակցական պահանջմունքների ձևավորման ու զարգացման գործընթացների, ճանաչողության և գործունեության բոլոր ձևերի (մանիպուլացիոն, առարկայական, խաղային, ուսումնական, աշխատանքային) վրա: Այդ պատճառով էլ լսողության խանգարման և դրա հետևանքով առաջացած հոգեկան զարգացման երկրորդային շեղումների վաղ բացահայտումն ու օգնության կազմակերպումը կենսական կարևոր նշանակություն ունեն [1,3]: Նշված հարցերի կարևորությունն առավել ընդգծվում է, երբ դրանք վեաբերում են լսողության խանգարումներ ունեցող մինչև երեք տարեկան երեխաների հետ ընտանիքում կազմակերպվող սուրդոմանկավարժական աշխատանքներին: Սուրդոմանկավարժական վաղ օգնության ներդրումն ընտանիքում ընձռում է շտկող-զարգացնող աշխատանքերը մինչ 3 տարեկանը, կազմակերպելու հնարավորություն, հենվելով խոսքի զարգացման բոլոր փուլերի և սենզիտիվ շրջանների վրա, աշխատելով երեխայի համար բնական միջավայրում և մասնակից դարձնելով ծնողներին: Հիմք ընդունելով այն, որ նման մոտեցումը սուրդոմանկավարժության մեջ նորույթ է, կարծում ենք, որ այն կարևոր գի-

տահետազոտական հիմնախնդիր է և բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի[4, 6]:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալը՝ մեր նպատակն է կազմակերպել, իրականացնել և հետազոտել, լսողության խանգարումներ ունեցող երեխաներին ընտանիքում վաղ օգնությունը: Այս նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հետազոտվող խնդրի լուսաբանվածության աստիճանը՝ մասնագիտական գրականության մեջ,
- հետազոտել վաղ օգնության վերաբերյալ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը,
- նրանց հաղորդել մասնագիտական որոշակի գիտելիքներ և ձևավորել համապատասխան պատկերացումներ հետազոտվող խնդրի վերաբերյալ,
- հիմնավորել վաղ տարիքում լսողության խանգարում ունեցող երեխաների և նրանց ծնողների հետ տարվող սուրդոմանկավարժական և հոգեբանական աշխատանքների կարևորությունը [2,5]:

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ սուրդոմանկավարժական վաղ օգնության աշխատանքները բոլոր տարիքներում էլ կարևորվում են, սակայն դրանք առավելապես վերաբերում են 3 տարեկանից հետո սկսվող մասնագիտական միջամտությանը: Ինչ վերաբերում է ընտանիքում ներդրվող վաղ օգնության ձևերին, ապա դրանց վերաբերյալ տեսագործնական հետազոտությունները բացակայում են [1,3,5]:

Այսօր մեր երկրում լսողության խանգարումներն ախտորոշվում են երեխայի ծնվելուց քառասունութ ժամ հետո: Այս հանգամանքն առավել դյուրին է դարձնում լսողության խանգարումներ ունեցող երեխաներին վաղ օգնության կազմակերպումը, որն անհնար է պատկերացնել առանց սուրդոմանկվարժական միջամտության: Ելնելով նրանից, որ վաղ օգնության կազմակերպման համար ամենաբարենպաստ պայմանները հնարավոր է ստեղծել ընտանեկան միջավայրում՝ մենք ուսումնասիրել ենք վաղ օգնության վերաբերյալ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը:

Այս հետազոտությունները ցույց են տվել, որ նրանց 65%-ը վաղ օգնության մասին հստակ տեղեկատվություն ունի, սակայն հստակ չի պատկերացնում, թե ինչպես է այն կիրառվում գործնականում, 25%-ը մասամբ է տեղեկացված և խիստ թերահավատորեն է վերաբերում սուրդոմանկավարժական աշխատանքներին ընտանիքի մասնակցությանը, իսկ ծնողների 10%-ը պատկերացում չունի, թե ինչ է վաղ օգնությունն այս հարցում:

Ծնողների շրջանում անցկացրած հարցումները վկայում են, որ ընտանիքի այս գործընթացին ճիշտ կազմակերպված մասնակցությունն անմիջականորեն ազդում է վաղ սկսված սուրդոմանկավարժական աշխատանքների արդյունավետության վրա. այն ընտանիք-

ները, որոնք հետևողականորեն են, որ երեխան լսողական սարքը կրի, ապահովում են ընտանեկան ջերմ մթնոլորտ, սուրդոմանկավարժական աշխատանքներում դրական արդյունքներ են գրանցվում: Ելնելով այս ուղղությամբ իրականացրած հետազոտության արդյունքներից կարելի է ընդհանրացնել, որ առավելապես այն ընտանիքներում են գրանցվում լսողությա խանգարումներ ունեցող երեխայի զարգացման լավագույն ելքերը, որտեղ ՝

- ընտանեկան դաստիարակության ընթացքում լսող և չլսող երեխաների միջև տարբերություններ չի դրվում,
- լսողության զարգացման համար օգտագործվում է երեխայի կյանքի յուրաքանչյուր պահը,
- վաղ օգնության ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ընդգրկվում են ընտանիքի բոլոր անդամները,
- անկախ նրանից՝ երեխան ընկալում է լսած խոսքն ամբողջությամբ, թե՝ ոչ, միշտ նրա հետ խոսում են նորմալ տեմպով և ձայնով:
- երեխաներին օրվա մեջ շատ ժամանակ են տրամադրում:

Այսպիսվ, լսողության խանգարումներ ունեցող երեխային ցուցաբերվող վաղ օգնության կազմակերպումն ընտանիքում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- զրույց ընտանիքի անդամների հետ,
- մասնագիտական տեղեկատվության ապահովում,
- ախտորոշման հնարավոր ելքերի ուղղությամբ խորհրդատվություն,
- երեխայի ֆիզիկական կարողությունների զարգացում,
- լսողական ընկալման զարգացում,
- առարկայական գործունեություն վարելու կարողության զարգացում,
- հուզական ոլորտի զարգացում,
- խոսքային միջավայրի ապահովում:

Լսողության խանգարումներ ունեցող երեխային ցուցաբերվող վաղ օգնության աշխատանքներն իրականացվում են ստորև ներկայացված սխեմայով (նկ.1):

Հաշվի առնելով դիդարկվող խնդիրները՝ ներկայացրել ենք այն հիմնական ռազմավարությունը, որով պետք է առաջնորդվեն ծնողները լսողության խանգարումներն ախտորոշելուց անմիջապես հետո: Տեսագործնական վերլուծությունները վկայում են, որ լսողության խանգարումների ախտորոշմանը պետք է հաջորդեն վերականգնողական աշխատանքները, որոնք իրականացվում են հետևյալ ուղղություններով՝

- լսողության վաղ պրոթեզավորում՝ համապատասխան սարքերով,
- անհատական պարապմունքների կազմակերպում սուրդոմանկավարժի հետ,
- լուսավորչական աշխատանքներ ծնողների հետ՝ լսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող վերականգնողական, լսողության և խոսքի զարգացման աշխատանքների բնույթին ծանոթացնելու նպատակով,
- երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացման մա-



Նկար 1. Լսողության խանգարումներով երեխաների ընտանիքում իրականացվող վաղ օգնության համագործակցային աշխատանքի սխեմա

կարդակի և ընդհանուր վիճակի գնահատում, որն իրականցնում են աուդիոլոգը և սուրդոմանկավարժը՝ երեխայի լսողական սարքը 3-6 ամիս կրելուց հետո:

Այսպես՝

- եթե լսողական սարքերով երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացումը համապատասխանում է նորմայի չափորոշիչներին, ապա երեխան շարունակում է կրել լսողական սարքերը և հաճախել սուրդոմանկավարժական պարապմունքների.
- լսողական սարքերով երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացումը չի համապատասխանում նորմայի չափորոշիչներին և ցուցված է խխունջային ներպատվաստում, ապա խորհուրդ է տրվում երեխային վիրահատել, քանի որ միակ միջոցը, որի շնորհիվ երեխան կարող է տիրապետել բանավոր խոսքին, խխունջային ներպատվաստումն է:

Այսպիսով, տեսագիտական և գործնական վերլուծությունները ցույց են տվել, որ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքում վաղ օգնության հիմնահարցերը գիտահետազոտական լուրջ մարտահրավերներ են առաջադրում սուրդոմանկավարժությանը, քանի որ սուրդոմանկավարժական աշխատանքների բովանդակությունն ու տեխնոլոգիաներն այս տեսան-

կյունից բավարար ուսումնասիրված չեն: Հաշվի առնելով սույն հանգամանքը՝ կարծում ենք, որ մեր կողմից ներկայացված լսողության խանգարումներ ունեցող երեխաներին ցուցաբերվող վաղ օգնության ուղղությունները և ձևերը կնպաստեն սուրդոմանկավարժական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Դրանք կնպաստեն մասնագետների և ծնողների իրազեկվածության մակարդակի բարձրամանը, կխթանեն վաղ օգնությունն ընտանիք ներդնելու և ծնող-մասնագետ համակործակցային փոխահարբերությունների ձևավորման կարևոր գործընթացները [1,3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев Л. Б. Сурдопедагогика. Москва, 2005.
2. Басова А.Г., Егоров С.Ф. История сурдопедагогики: Учеб. пособие. Москва, 1984.
3. Богданова Т. Г. Сурдопсихология, Москва, 2002.
4. Леонгард Э. И. Развитие речи детей с нарушениями слуха в семье: Методические рекомендации для родителей. Москва, 1985.
5. Пелымская Т.В. Выявление нарушений слуховой функции у детей 1-го и 2-го годов жизни (педагогический аспект) // Дефектология. Москва, 1987.
6. Янн П.А. Воспитание и обучение глухого ребенка: Сурдопедагогика как наука / Пер. с нем. Москва, 2003.

РЕЗЮМЕ
РАННЯЯ ПОМОЩЬ ДЕТЯМ С НАРУШЕНИЕМ СЛУХА В СЕМЬЕ

Л. А. Саратикян

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

Л. Н. Балабекян

логопед благотворительного фонда “Патмос-Арарат”

В статье представлена проблема оказания ранней помощи детям с нарушением слуха в семье, раскрываются основные задачи и направления построения этой работы.

SUMMARY

EARLY ASSISTANCE OF CHILDREN WITH HEARING IMPAIRMENTS IN THE FAMILIES

L. H. Saratikyan

Associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

L. N. Balabekyan

«Patmos-Ararat» charity foundation speech therapist

The problem of rendering the early assiastance for children with a hearing impairment in a family is presented in article and revealed the main objectives and the directions of this work.